Հավելված N 1
ՀՀ կառավարության
2024 թվականի ------- -- -ի
N --- -Ա որոշման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
«ՏԱՂԱՆԴՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ»

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման և տնտեսական առաջընթացի կարևորագույն գրավականներից է մարդկային կապիտալի զարգացումը և մարդու տաղանդի դրսևորումը, ինչն արտացոլված է մի շարք ռազմավարական փաստաթղթերում: «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» ՀՀ օրենքում ամրագրված է, որ «Կրթության զարգացման տեսլականն է՝ յուրաքանչյուրն օժտված է որոշակի տաղանդով, և կրթության համակարգի առաքելությունն է բացահայտել և հնարավորին չափ զարգացնել յուրաքանչյուրի տաղանդը՝ ընդլայնելով իր երկրում սեփական բարեկեցությունն ապահովելու անհատի հնարավորությունները, որի երաշխավորը պետք է լինեն մրցունակ տնտեսությունն ու կայուն պետությունը»:

2. Միաժամանակ ակնհայտ է, որ գործող կրթական համակարգի ընթացակարգերն ու մոտեցումները հնարավոր են դարձնում տաղանդների զարգացումը մինչև որոշակի աստիճան, այնինչ, առկա են դեպքեր, երբ քաղաքացիները որևէ ուղղությամբ կամ որևէ ոլորտում դրսևորում են առանձնահատուկ տաղանդներ, որոնց լիարժեք բացահայտումը և զարգացումը պահանջում է հատուկ մեթոդաբանություն և գործիքակազմ: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում հավելյալ անհրաժեշտություն կա ունենալու կառույց, որի

գործունեությունը միտված կլինի Հայաստանի Հանրապետության տարածքում մարդկային տաղանդի հայտնաբերմանն ու դրա դրսևորմանն աջակցելուն՝ միևնույն ժամանակ թիրախում պահելով ինքնուրույն և ստեղծարար անհատի ձևավորման նպատակը:

3. Հայեցակարգի շրջանակներում տաղանդ տերմինը նշանակում է մարդու ունակությունը, հակումները կամ կարողությունները մարդկային գործունեության որևէ մեկ կամ մի քանի բնագավառներում: Այն ներառում է անհատի ներքին կարողությունները, պոտենցիալը և հնարավորությունը որոշակի ոլորտներում կամ ուղղություններում գերազանցության դրսևորման առումով: Տաղանդի դրսևորումը կարող է լինել տարբեր եղանակներով, ներառյալ՝ մտավոր, ստեղծագործական, արտիստիկ, աթլետիկ կամ ձեռնարկատիրական հակումները:

4. Մարդկային տաղանդը հայտնաբերվելուց բացի կարիք ունի զարգացման հավելյալ ծրագրերի, կրթության և փորձառության միջոցով, որպեսզի առավել արդյունավետ ծառայի անհատի ինքնադրսևորմանը, ինչպես նաև հասարակությանը և պետությանը:

5. Հարկ է նշել, որ տաղանդների բացահայտումն ու զարգացումը համարվում են համընդհանուր խնդիրներ աշխարհի տարբեր երկրներում: Օրինակ՝ հայտնի Մաքքինզի խորհրդատվական կազմակերպությունը «Վերամտածելով մարդկային զարգացումը՝ տաղանդների բացակայության մարտահրավերները հաղթահարելու համար» ուսումնասիրության մեջ անդրադառնում է այն հանգամանքին, որ աշխարհում բազմաթիվ ընկերություններ հանդիպում են տաղանդների և պահանջվող հմտությունների բացակայությանը, որն անհնար է հաղթահարել, եթե տաղանդների բացահայտման և զարգացման հետևողական քաղաքականություն չի վարվում:

6. Սույն հայեցակարգի շրջանակներում հիմնական շահառուներն են.

1) Հայաստանի Հանրապետությունում գործող կրթական հաստատություններում սովորողները՝ ներառյալ բուհերի ուսանողները,

2) ֆիզիկական անձինք, որոնք դրսևորում են բացառիկ ընդունակություններ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներից որևէ մեկում,

3) թիմերը, որոնց անհրաժեշտ է որոշակի աջակցություն՝ ինքնուրույն գործունեության համար:

7. Աջակցությունը կարող է տրամադրվել անհատույց՝ կրթաթոշակի, նյութական աջակցության տեսքով, անտոկոս փոխառության տրամադրմամբ կամ կազմակերպություններում ներդրումների միջոցով: Աջակցության ձևերի ու գործիքակազմի մշակումը պետք է հանդիսանա տաղանդների բացահայտմամբ ու զարգացմամբ զբաղվող հատուկ կառույցի գործունեության առանցային ուղղություններից մեկը:

2. ԻՐԱՎԻՃԱԿ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

8. Հայաստանի Հանրապետությունում դրսևորված տաղանդի զարգացումը հիմնականում տեղի է ունենում սեփական նախաձեռնությամբ և հնարավորությունների սահմաններում, ինչպես նաև շատ դեպքերում, հատկապես՝ դպրոցահասակ տարիքի սովորողների պարագայում ենթակա է որոշակի ընկճման՝ հօգուտ ավանդական կամ թվացյալ ավելի հեղինակավոր մասնագիտությունների՝ ընտանիքի ավագ սերնդի կողմից, ինչն էլ պայմանավորված է հեռանկարների անհստակությամբ:

9. Ներկայումս չկան անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգեր, որոնք հնարավորություն կընձեռեն վաղ տարիքից անհատի հակումներին և տաղանդի բացահայտմանը և դրա դրսևորմանը և առաջխաղացմանը մասնագիտորեն աջակցելուն:

10. Հատկապես գյուղական համայնքներում կամ սահմանամերձ բնակավայրերում տաղանդների դրսևորումը և զարգացումը կարող է ստորադասվել

առօրյա գործունեությանը և վաղ տարիքից ցածր արդյունարարությամբ աշխատանքի անցնելը էապես խոչնդոտում է որոշ դեպքերում, անգամ, բազային կրթություն ստանալուն:

11. Որոշ դեպքերում ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով՝ հնարավոր է անհատի որոշակի առանձնահատուկ ունակությունները անտեսվեն և չստանան համապատասխան իրացում: Տաղանդների անտեսումը հնարավոր է նաև այն պայմաններում, երբ ոչ բոլոր բնակավայրերում են առկա տարբեր նախասիրությունների զարգացման համար անհրաժեշտ ծառայություններ, ինչպես՝ արվեստի կամ մարզական խմբակներ, որոնք հնարավորություն են տալիս նկատել երեխաների մոտ այս կամ այն տաղանդի դրսևորումը:

3. ՏԱՂԱՆԴՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ

12. Տաղանդների զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կառույց է, որի աշխատանքները միտված են լինելու Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում մարդկային տաղանդի հայտնաբերմանն ու այդ տաղանդի դրսևորմանը աջակցելուն՝ ընդհուպ մինչև իր տաղանդի առավելագույն դրսևորմամբ հավելյալ արժեք ստեղծող, ինքնուրույն և մրցունակ անհատականությունների ու թիմերի կայացումը:

13. Հիմնադրամի ֆինանսական միջոցները գոյանալու են Հայաստանի Հանրապետության բյուջետային հատկացումներից, Հիմնադրամի կողմից բաժնետիրական գործունեության արդյունքում գոյացած եկամուտներից, անհատ բարեգործների, ինչպես նաև բարեգործական կազմակերպությունների միջոցներից:

14. Հիմնադրամն իր գործունեության ընթացքում պահպանելու է ֆինանսական լիակատար հաշվետվողականություն և թափանցիկություն:

15. Հիմնադրամը կարող է հանդես գալ որպես իր կողմից աջակցություն ստացած նախաձեռնություններում բաժնետեր՝ այդպիսով գեներացնելով հավելյալ միջոցներ, որոնք կարող են ծառայել միայն Հիմնադրամի առաքելությամբ սահմանված նպատակների իրագործմանը:

16. Հիմնադրամը պետք է իրականացնի իրավիճակի վերլուծություն, առանձնացնի թիրախային խմբերը, յուրաքանչյուր թիրախային խմբերի համար մշակի տաղանդի հայտնաբերման գործուն մեխանիզմներ և աջակցության մեթոդաբանություն՝ թիրախում պահելով ինքնուրույն և մրցունակ անհատի կամ թիմերի ձևավորումը:

17. 16-րդ ենթակետով նշված աշխատանքների իրականացման ժամանակացույցը ենթակա է քննարկման և հաստատման Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

18. Իր աշխատանքների մասնագիտական մակարդակն ապահովելու համար՝ Հիմնադրամը կարող է ունենալ հանձնաժողովներ կամ մեթոդական խորհուրդ՝ բաղկացած ոլորտում որոշակի փորձառություն ունեցող Հայաստանի Հանրապետության և արտերկրի անդամներից, որոնք կիրականացնեն գործունեության բովանդակային վերահսկողություն:

19. Հայաստանի Հանրապետությունը՝ որպես հիմնադիր, իրականացնում է Հիմնադրամի գործունեության մշտադիտարկում և ապահովում է սույն հայեցակարգի սկզբունքների, Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված առաքելության պահպանումը և իր լիազորությունների շրջանակում միջամտում է դրանցից շեղման պարագայում:

4. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

20. Տաղանդների զարգացման ծրագրի իրականացումը սկսվում է Հիմնադրամի պետական գրանցմամբ:

21. Հիմնադրամի պետական գրանցումից և ֆինանսավորումից հետո՝ առավելագույնը 6 ամսվա ընթացքում Հիմնադրամի աշխատակազմը իրականացնում է խնդրի և միջավայրի համակողմանի ուսումնասիրություն, որի արդյունքները ներկայացվում են լիազոր մարմնին և ՀՀ կառավարությանը:

22. Ուսումնասիրության հիման ձևավորվում են աշխատանքի հիմնական ուղղությունները, և մշակվում են հիմնական ծրագրերը, դրանց թիրախ-խմբերի նկարագրով, աջակցության մեթոդաբանությամբ, արդյունքային ցուցանիշներով, ֆինանսական գնահատականով և մոնիթորինգի մեխանիզմով:

23. Ընկալելով, որ անհատների աջակցությունը կարող է ունենալ նաև յուրահատուկ իրավիճակներ, ծրագրերը պետք է ունենան նաև շահառուների «ուղեկցման» մեխանիզմներ՝ ապահովելով ընթացքի մոնիթորինգ և, ըստ անհրաժեշտության, խորհրդատվություն:

24. Ծրագրերը ներկայացվում են խորհրդի քննարկման և լիազոր մարմնի երաշխավորությամբ ներկայացվում են ՀՀ կառավարություն՝ ֆինանսավորման:

25. Անհատ բարեգործների կամ բարեգործական հիմնադրամների կողմից ստացված միջոցները կարող են ծախսվել միայն հաստատված ծրագրերի շրջանակներում: